ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Գիտելիքի, ստեղծագործական կարողությունների թեստ



ԵՐԵՎԱՆ 2026

**2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ) «073101.00.6 –ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ՝ «ԳԻՏԵԼԻՔԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏ (ԳՍԿԹ)»-Ի ՕՐԻՆԱԿ 2**

Թեստը կազմված է 3 հիմնական բաժնից.

1. **Մաթեմատիկա** 36 առաջադրանք՝ 9 միավոր

- Հանրահաշիվ 16 առաջադրանք՝ 4,0 միավոր
- Երկրաչափություն 20 առաջադրանք՝ 5,0 միավոր

2. **Ճարտարապետական տրամաբանություն** 4 հարց՝ 1 միավոր

- Ճարտարապետական և տրամաբանական հարցեր՝ 4 հարց՝ 1 միավոր

*1 և 2 բաժնի յուրաքանչյուր հարցը գնահատվում է՝ 0,25 միավոր*

*/Ընդհանուր 40 առաջադրանք և հարց/ 10 միավոր*

3. **Գծագրություն** 2 առաջադրանք՝ 10 միավոր

- Լծորդում 1 առաջադրանք՝ 4 միավոր
- Աքսոնոմետրիա, հատույթ, կտրվածք, պրոյեկցիա 1 առաջադրանք՝ 6 միավոր

*/Ընդհանուր 42 հարց-առաջադրանք/*

Թեստի ամբողջական կատարման և ձևաչափի լրացման համար տրվում է 5 ժամ (300 րոպե), առանց ընդմիջման:

# ԹԵՍՏ

## 1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1. Նշվածներից ո՞ր եռյակում են թվերը գրված նվազման կարգով:

ա) $(0,7)^3$; 0,49; 1 բ) 1; $(0,7)^3$; 0,49 գ) 0,49; $(0,7)^3$; 1 դ) 1; 0,49; $(0,7)^3$

նշումների համար

2. Գտնել $\left(3\frac{1}{12}+1\frac{5}{12}\right):1\frac{1}{2}$ արտահայտության արժեքը:

ա) $4$ բ) $3\frac{1}{3}$ գ) $3$ դ) $4,5$

նշումների համար

3. Ընկերության մի բաժնի աշխատակիցներ, համապատասխանաբար, 50, 49, 26, 25 և 20 տարեկան են: Որքա՞ն է ընկերության այդ բաժնի աշխատակիցների միջին տարիքը:

ա) 26 բ) 34 գ) 25 դ) 30

նշումների համար

4. Գտնել թիվը, եթե նրա 12%-ը հավասար է 60:

ա) 500 բ) 72 գ) 720 դ) 50

նշումների համար

5. Թիվը փոքրացրել են 50%-ով: Քանի՞ տոկոսով պետք է մեծացնել ստացված թիվը, որպեսզի նորից ստացվի տրված թիվը:

ա) 50 բ) 25 գ) 100 դ) 20

նշումների համար

6. Լուծել $(5x-9)^2=(3-x)^2$ հավասարումը:

ա) 2 բ) $\frac{3}{2}$ գ) 2 և $\frac{3}{2}$ դ) -2 և $-\frac{3}{2}$

նշումների համար

7. Լուծել $\left(x^2+1\right)\left(x+1\right)\left(x-4\right)<0$ անհավասարումը:

ա) $\left[-1;4\right]$ բ) $\left(4;\infty\right)$ գ) $\left(-1;4\right)$ դ) $\left(-\infty;-1\right)\cup\left(4;\infty\right)$

նշումների համար

8. Երկու թվերի գումարը 18 է: Եթե ավելի մեծ թվից հանենք նրա $\frac{7}{8}$ մասը, ապա կստանանք ավելի փոքր թիվը: Գտնել այդ թվերը:

ա) 14 և 4 բ) 16 և 2 գ) 12 և 6 դ) 10 և 8

նշումների համար

9. Դպրոցում կա այնքան դասարան, որքան աշակերտ կա յուրաքանչյուր դասարանում: Քանի՞ դասարան կա դպրոցում, եթե դպրոցում աշակերտների ընդհանուր թիվը 784 է:

ա) 392 բ) 16 գ) 14 դ) 28

նշումների համար

10. Մի քաղաքից մյուսը հասնելու համար մեքենան ծախսել է 30 լ բենզին, իսկ մոտոցիկլետը՝ $10\frac{1}{2}$ լ: Քանի՞ տոկոսով է մոտոցիկլետի ծախսած բենզինը պակաս մեքենայի ծախսածից:

ա) 70 բ) 200 գ) 65 դ) 55

նշումների համար

11. Քարտեզի մասշտաբը 1:800000 է: Տեղանքում երկու քաղաքների միջև հեռավորությունը 32 կմ է: Որոշել այդ քաղաքների հեռավորությունը քարտեզի վրա:

ա) 4 սմ  բ) 40 սմ  գ) 8 սմ  դ) 32 սմ

նշումների համար

12. Քանի՞ եղանակով կարելի է 5 տարբեր գրքերը բաժանել 3 երեխաների միջև:

ա) 20  բ) 10  գ) 45  դ) 60

նշումների համար

13. Գտնել $f(x) = -x^2 - 1$ և $g(x) = |4x - 8|$ ֆունկցիաների գրաֆիկների հատման կետերի քանակը:

ա) 0 բ) 2 գ) 4 դ) 3

նշումների համար

14. Գտնել $f(x) = \frac{x^2}{x-3}$ և $g(x) = x - 3$ ֆունկցիաների գրաֆիկների հատման կետի կոորդինատները:

ա) (3,0) բ) (1,5;-1,5) գ) (-1,5;1,5) դ) չեն հատվում

նշումների համար

**Յոթ միատեսակ տրակտորներից կազմված բրիգադը կարող է դաշտը հնձել 10 օրում:**

15. Քանի՞ օրում կհնձեն դաշտը, եթե աշխատի միայն 5 տրակտոր:

նշումների համար

16. Քանի՞ օրում կավարտեին հունձը, եթե աշխատեին 25%-ով ավել արտադրողականությամբ:

նշումների համար

**Հավասարասրուն սեղանի հիմքերի երկարություններն են 8 սմ և 5 սմ, իսկ սրունքի երկարությունը՝ 3 սմ:**

17. Գտնել սեղանի փոքր անկյունը:

ա) $30^{\circ}$ բ) $45^{\circ}$ գ) $60^{\circ}$ դ) $75^{\circ}$

նշումների համար

18. Գտնել սեղանի բարձրության երկարությունը:

ա) $3\sqrt{3}$ սմ բ) 2,59 սմ գ) $\frac{3\sqrt{3}}{2}$ սմ դ) 6 սմ

նշումների համար

19. Գտնել սեղանի մակերեսը:

ա) 9 սմ$^2$ բ) 10 սմ$^2$ գ) 16 սմ$^2$ դ) $\frac{39}{4}\sqrt{3}$ սմ$^2$

նշումների համար

20. Գտնել սեղանի անկյունագծի երկարությունը:

ա) 7 սմ բ) 5 սմ գ) 6 սմ դ) 5,5 սմ

նշումների համար

**Կանոնավոր եռանկյուն բուրգի հիմքի կողմը 12 է, իսկ հարթագիծը՝ 4:**

21. Գտնել բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը:

ա) 48 բ) 64 գ) 72 դ) 144

նշումների համար

22. Գտնել բուրգի կողմնային կողի երկարությունը:

ա) 10 բ) $2\sqrt{5}$ գ) $4\sqrt{10}$ դ) $2\sqrt{13}$

նշումների համար

23. Գտնել բուրգի բարձրությունը:

ա) 1 բ) 2 գ) 1,5 դ) 3

նշումների համար

24. Գտնել բուրգի ծավալը:

ա) $72\sqrt{3}$ բ) $48\sqrt{3}$ գ) $36\sqrt{3}$ դ) $24\sqrt{3}$

նշումների համար

**Հավասարասրուն եռանկյան անկյուններից մեկը $120^0$ է, նրան արտագծված շրջանագծի շառավիղը՝ 10:**

25. Գտնել հիմքին առընթեր արտաքին անկյունների կիսորդներով կազմված սուր անկյան աստիճանային չափը:

ա) $30^\circ$ բ) $75^\circ$ գ) 50° դ) 80°

նշումների համար

26. Գտնել եռանկյան մակերեսը:

ա) 50 բ) 25 գ) $50\sqrt{3}$ դ) $25\sqrt{3}$

նշումների համար

**Հատած կոնի հիմքերի տրամագծերը 10 և 20 են, իսկ ծնորդը՝ 13:**

27. Գտնել հատած կոնի ծավալը:

ա) $195\pi$ բ) $500\pi$ գ) $700\pi$ դ) $2800\pi$

նշումների համար

28. Գտնել հատած կոնի լրիվ մակերևույթի մակերեսը:

ա) $320\pi$ բ) $305\pi$ գ) $295\pi$ դ) $695\pi$

նշումների համար

**Շեղանկյան անկյունագծերի երկարությունները հարաբերում են ինչպես 3:4, իսկ ներգծած շրջանագծի շառավիղը 6սմ է:**

29. Գտնել շեղանկյան պարագիծը:

ա) 40 սմ    բ) 50 սմ    գ) 60 սմ    դ) 70 սմ

նշումների համար

30. Գտնել այն քառանկյան մակերեսը, որի գագաթները տրված շեղանկյան կողմերի միջնակետերն են:

ա) 37,5 $սմ^2$    բ) 30 $սմ^2$    գ) 75 $սմ^2$    դ) 150 $սմ^2$

նշումների համար

**Շրջանագծից դուրս գտնվող A կետից շրջանագծին տարված են $AB$ շոշափողն ու $AM$ հատողը, որի արտաքին մասը AC-ն է: Հայտնի է, որ $AM = 3AC = 6\sqrt{3}$ , իսկ $\angle BAM = 30^\circ$ :**

31. Գտնել շրջանագծի շոշափողի երկարությունը:

նշումների համար

32. Գտնել $BM$ փոքր աղեղի աստիճանային չափը:

նշումների համար

**Կանոնավոր եռանկյուն բուրգի հիմքի կողմը $6\sqrt{2}$ է, իսկ կողմնային կողերը փոխուղղահայաց են:**

33. Գտնել բուրգի կողմնային կողին առընթեր երկնիստ անկյան աստիճանային չափը:

նշումների համար

34. Գտնել բուրգի ծավալը:

նշումների համար

35. Գտնել բուրգի հիմքին ներգծած շրջանագծի շառավղի քառակուսին:

նշումների համար

36. Գտնել բուրգին արտագծած գնդային մակերևույթի շառավղի քառակուսին:

նշումների համար

37. Ո՞ր ուրվագծային սխեման է համապատասխանում ներկայացված հատակագծին:



ա)



գ)



բ)



դ)



ա) բ) գ) դ)

38. Ո՞ր ուրվագծային սխեման է համապատասխանում ներկայացված հեռանկարին:



**ա)**





**գ)**

**բ)**





**դ)**

**ա)** **բ)** **գ)** **դ)**

39.



*Ո՞րն է վերոնշյալ պատկերների շարքում հաջորդը:*

ա) բ) գ) դ)



40.



*Ո՞րն է վերոնշյալ պատկերների շարքում հաջորդը:*

ա) բ) գ) դ)



ա) բ) գ) դ)

1. Աքսոնոմետրիա, հատույթ, կտրվածք, պրոյեկցիա

Տրված են մարմնի երկու պրոյեկցիաները: Պահանջվում է կառուցել ուղղանկյուն իզոմետրիկ աքսոնոմետրիան և տալ բոլոր անհրաժեշտ կտրվածքները:






2. Լծորդում

Կառուցել տրված պայմաններին (չափեր և շոշափումներ) բավարարող պատկերը, որը կազմված է հատվածներով և շրջանագծային աղեղներով: Փոքր շրջանակներով նշված են երկու գծերի շոշափման կետերը: Նշել չափերը և պահպանել կառուցման բոլոր գծերը:

